ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# «Կովկասագիտություն» բաժնի մագիստրոսական

# Ծրագիր

# Ռուսաստանը և Կովկասի տարածաշրջանը 19-20-րդ դարերում

**Կազմեց Է. Լ. Ջոհրաբյանը,**
**պատմ. գիտ. թեկն., դոցենտ**

**Երևան**
**ԵՊՀ հրատարակչություն**
**2015**

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Ռ 950

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

**Կազմեց** պատմ. գիտ. թեկն., դոցենտ Է. Լ. Ջոհրաբյանը

Ռ 950 Ռուսաստանը և Կովկասի տարածաշրջանը 19-20-րդ դարերում /Կազմեց Է. Լ. Ջոհրաբյանը: -Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 20 էջ:

Մագիստրոսական դասընթացի ծրագիրն ընդգրկում է Ռուսաստանի կովկասյան քաղաքականության հիմնարցերը 19-20-րդ դդ.: Այդ համատեքստում արծարծվում են ռազմաքաղաքական, տնտեսական, էթնոմշակութային տարաբնույթ խնդիրներ, որոնց արդիականությունը ակնհայտ է մեր օրերում:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2039-7

© ԵՊՀ հրատ., 2015
© Կազմողի համար, 2015

**Նպատակը**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել Ռուսաստանի և Կովկասի ժողովուրդների փոխհարաբերությունները 19-20-րդ դդ., ցույց տալ Ռուսաստանի Կովկասում վարած քաղաքականությունը, դրա շրջափուլերը և առանձնահատկությունները ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, ազգային, կրոնական ոլորտներում:

**Կրթական արդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա Ռուսաստանի և Կովկասի ժողովուրդների 19-20-րդ դդ. պատմության հիմնահարցերը,
2. Կհասկանա Ռուսաստանի և Կովկասի ժողովուրդների 19-20-րդ դդ. փոխհարաբերությունների բնույթն ու առանձնահատկությունները:
3. Կկարողանա կատարել պատմական վերլուծություններ և հետազոտական որոշակի աշխատանքներ:

**Բովանդակությունը**

**Թեմա 1**՝ Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Կովկասում 19-20-րդ դդ. (ընդհանուր բնութագիր): **Թեմա 2**՝ Վրաստանի և Արևելյան Այսրկովկասի միացումը Ռուսաստանին 19-րդ դ.-ի սկզբին: **Թեմա 3**՝ Ռուս–պարսկական 1826-1828թթ. և ռուս-թուրքական 1828-1829 թթ. պատերազմները, դրանց հետևանքները Կովկասյան ժողովուրդների կյանքում: **Թեմա 4՝** Ռուսաստանը և Հյուսիսային Կովկասի ժողովուրդները, Կովկասյան պատերազմը 1817-1864 թթ.՝ Մյուրիդիզմ: **Թեմա 5՝** Ռուսաստանի կողմից տարածաշրջանի զաղութացման սոցիալ-տնտեսական, էթնիկ, կրոնական և հոգևոր-մշակութային քաղաքականությունը Կովկասում 19-րդ դարում: **Թեմա 6**՝ Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնախնդիրներն և Կովկասյան տարածաշրջանը 19-րդ դարի երկրորդ կեսին: **Թեմա 7**՝

Կովկասը Ռուսաստանի վարչատարածքային բաժանումներում 19-20-րդ դարում: **Թեմա 8**՝ Ռուսաստանը և Կովկասը 1-ին աշխարհամարտի տարիներին: **Թեմա 9**՝ Ռուսաստանյան հեղափոխություններր 1917 թ. և դրանց ազդեցությունը Կովկասում: **Թեմա 10**՝ Կովկասը Խորհրդային ժամանակաշրջանում: **Թեմա 11**՝ Ռուսաստանի քաղաքականությունը Կովկասում ետխորհրդային տարիներին.

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Նախատեսված **2** ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **10** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **2** հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար **5** միավոր: Միավորների քայլը 0.5 է:

## Թեմա 1.
## Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Կովկասում 19-ից 20-րդ դարերում

Կովկասի ժողովուրդների քաղաքական, սոցիալ-տնտեսական կացությունը և առևտրական ու ռազմաղիվանագիտական հարաբերությունները ռուսական կայսրության հետ 19-րդ դարի սկզբներին: Ռուսաստանի Կովկասյան քաղաքականության հայեցակարգային հիմքերի ձևավորումը: Ռուսաստանի կովկասյան արտաքին քաղաքականությունը արևելյան քաղաքականության համատեքստում: 1801 թ. պալատական հեղաշրջումը Ռուսաստանում և ցարական նոր արքունիքի քաղաքականությունը Կովկասի նկատմամբ: Այսրկովկասյան ժողովուրդների ազատագրական պայքարի գործոնը Ռուսաստանի գաղութային նվաճողական ծրագրերում:

## Թեմա 2.
## Վրաստանի և Արևելյան Այսրկովկասի միացումը Ռուսաստանին 19-րդ դարի առաջին կեսին

Այսրկովկասյան հիմնական (հայ, վրացի, կովկասյան թաթարներ) ժողովուրդները 19-րդ դարի սկզբներին: Արևելյան Վրաստանը Ռուսաստանին միացման նախօրյակին. 1783 թ. Գեորգիևսկի պայմանագիրը: Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին 1801 թ. և վրացական թագավորության վերացումը Քարթլ-Կախեթիում:

Արևմտյան Վրաստանի ռուսական կայսրությանը բռնակցման ընթացքը:

Ցարիզմի գաղութային քաղաքականության դրսևորումները Այսրկովկասում և Հյուսիսային Կովկասի ժողովուրդների նկատմամբ, տեղական ժողովուրդների դիմադրական քայլերը, առաջին ապստամբությունները Վրաստանում:

Արևելյան Այսրկովկասը Ռուսաստանի նվաճողական գաղութային ծրագրերում: 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմը: 1813 թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագիրը և դրա արդյունքները: 1806-1812 թթ. ռուս- թուրքական պատերազմը. Բուխարեստի 1812 թ. մայիսի 16-ի պայմանագիրը:

**Թեմա 3.**

## Ռուս- պարսկական 1826-1828 թթ. և ռուս-թուրքական 1828-1829 թթ. պատերազմները և դրանց հետևանքները Այսրկովկասի ժողովուրդների կյանքում

Շահական Պարսկաստանն ու Օսմանյան Թուրքիան՝ ընդդեմ Ռուսաստանի Կովկասյան քաղաքականության: 1826-1828 թթ. ռուս պարսկական և 1828-1829 թթ. ռուս թուրքական պատերազմները, ռազմական գործողությունների ընթացքը: Այսրկովկասյան ժողովուրդների վերաբերմունքը պատերազմների նկատմամբ: 1828 թ. ռուս-պարսկական Թուրքմենչայի պայմանագիրը՝ Երևանի, Նախիջևանի խանությունների և Օրդուբադի մահալի միացումը ռուսական կայսրությանը: Հայկական ինքնավարության ծրագիրը:

1829 թ. ռուս-թուրքական պատերազմը. Ադրիանապոլսի պայմանագրի հետևանքները Կովկասյան ժողովուրդների կյանքում:

Միգրացիոն գործընթացները և ժողովրդագրական պատկերի փոփոխությունները Կովկասում 19-րդ դարի առաջին կեսին:

## Թեմա 4.
## Ռուսաստանը և Հյուսիսային Կովկասի ժողովուրդները 19-րդ դարում. Կովկասյան պատերազմը 1817-1864 թթ., մյուրիդիզմ

Հյուսիսային Կովկասը Ռուսաստանի արտաքին քաղաքականության ծրագրերում: Հյուսիսային Կովկասի լեռնական ժողովուրդների էթնիկ պատկերը: Մյուրիդիզմ:

Հյուսիսային Կովկասի ժողովուրդների հասարակական-տնտեսական կյանքը: Կովկասյան պատերազմի սկիզբը, փուլերն ու ռազմական գործողությունների ընթացքը, ավարտն ու արդյունքները:

## Թեմա 5.
## Ռուսաստանի կողմից Կովկասի տարածաշրջանի գաղութացման սոցիալ-տնտեսական, էթնիկ, կրոնական և հոգևոր-մշակութային քաղաքականությունը 19-րդ դարում

Կովկասի ժողովուրդների էթնիկ-ազգային համայնապատկերը 19-րդ դ. սկզբին: Ցարիզմի ազգային քաղաքականության սկզբունքները և ռուսականացման քաղաքականությունը որպես ելակետ կովկասյան էթնիկ հանրությունների նկատմամբ: Ռուսական արքունիքի վերաբնակեցման քաղաքականությունը երկրամասում: Կովկասի ժողովուրդների փոխհարաբերությունները, միգրացիոն գործընթացները, էթնիկ խճապատկերի հստակեցումը 19-րդ դարի ավարտին և 20-րդ դարի սկզբին:

Կովկասի կրոնական և հոգևոր-մշակութային հիմնախնդիրները ցարիզմի գաղութային ծրագրերում: Վրացական ուղղափառ եկեղեցու ավտոկեֆալիայի վերացումը և էկզարխայի ստեղծումը:

Ցարական արքունիքի և հայոց եկեղեցու փոխհարաբերությունները: 1836 թ. մարտի 11 (Положение) կանոնադրությունը հայ առա-

քելական եկեղեցու նկատմամբ: Հայ առաքելական եկեղեցու գործունեությունը:

Ցարիզմը և Կովկասի մահմեդականությունը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբում: 1872 թ. ապրիլի 5-ի ցարական հրամանը իսլամական հոգևոր-կրոնական վարչությունների ստեղծման վերաբերյալ:

Ճորտատիրական կարգերի ճգնաժամը Ռուսաստանում: 1861 թ. գյուղացիական ռեֆորմը. դրա գործադրումը Կովկասում: 1860-70-ականների ռազմական, վարչադատական, տեղական կառավարման ոլորտների վերափոխությունները Ռուսաստանում: Կապիտալիստական նոր հարաբերությունների շրջափուլի ձևավորումը և այդ հարաբերությունների ներթափանցումը Կովկաս, զարգացման առանձնահատկությունները: Կովկասը Ռուսաստանի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական գործընթացների ոլորտում:

## **Թեմա 6**.
## **Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնախնդիրները և Կովկասյան տարածաշրջանը 19-րդ դարի երկրորդ կեսին**

Ռուսաստանի արտաքին Արևելյան քաղաքականությունը և Կովկասը 19-րդ դարի երկրորդ կեսին: Ղրիմի (Արևելյան) 1853-1856 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Փարիզի հաշտության պայմանագիրը և կովկասյան ժողովուրդները:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաճակատը. կովկասյան ժողովուրդների մասնակցությունը պատերազմին և արդյունքները: Սան Ստեֆանոյի պայմանագիրը: Բեռլինի վեհաժողովը:

## Թեմա 7.
## Կովկասը ցարական Ռուսաստանի վարչատարածքային բաժանումներում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին

Վարչատարածքային բաժանումները Կովկասում 19-րդ դ. առաջին կեսին և ռուսական վարչաձևի հաստատումը: 1828 թ. մարտի 21-ի հրամանագիրը. Հայկական մարզի կազմակերպումը:

Վարչական նոր բաժանումները 1840 թ., Հայկական մարզի վերացումը, վրացաիմերեթական նահանգի և Կասպիական մարզի ստեղծումը: Կովկասի փոխարքայության հիմնումը 1844 թ.-ին:

Վարչական նոր փոփոխությունները 1846 թ. դեկտեմբերի 14-ի «Կանոնադրությունը» Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու, Դերբենտի նահանգների ստեղծումը: 1849 թ.-ին Երևանի նահանգի ստեղծումը:

1867 թ. Կովկասի կառավարման նոր կանոնադրությունը և վարչական փոփոխությունները: Բաքվի և Ելիզավետապոլի նահանգների ստեղծումը:

Վարչատարածքային հիմնախնդիրները Կովկասում 20-րդ դարի սկզբին:

## Թեմա 8.
## Ռուսաստանը և Կովկասը 1-ին աշխարհամարտի տարիներին

Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում և տեղական ժողովուրդների մասնակցությունն ու վերաբերմունքը պատերազմին: Հայկական կամավորական ջոկատների կազմավորումը և մասնակցությունը ռազմական գործողություններին: Ազգային բանակներ ստեղծելու գաղափարը և դրա իրականացման քայլերը 1917 թ.-ին սկզբին: Ազգային զորամասերի ստեղծումը 1917 թ. վերջերին: Կովկասյան ժողովուրդների ակնկալիքները պատերազմից:

## Թեմա 9.
## Ռուսաստանյան հեղափոխությունները 1917 թ. և դրանց ազդեցությունը Կովկասում

1917 թ. փետրվարյան հեղափոխությունը և դրա ազդեցությունն ու հետևանքները Կովկասում: Ժամանակավոր կառավարության ապակենտրոնացման քաղաքականությունը: Վարչատարածքային ինքնավարության ձգտումները Կովկասում և տարածքային վեճերի սկզբնավորումը: Այսրկովկասի ազգային, վարչատարածքային բաժանման հիմնահարցը. 1917 թ. Պետրոգրադի խորհրդակցությունը:

1917 թ. հոկտեմբերյան հեղափոխության հետևանքները Կովկասում: Անկախ պետությունների հռչակումն Այսրկովկասում 1918 թ. մայիսին: Հայ-վրացական 1918 թ. պատերազմը, դրա արդյունքները: Հայ-ադրբեջանական հարաբերությունների բնույթը, Ադրբեջանի նվաճողական գործողությունները հայկական տարածքներ Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ 1918-1920 թթ.:

Վրաց-ադրբեջանական փոխհարաբերություններն ու տարածքային հիմնախնդիրները 1918-1920 թթ.: Կովկասի խորհրդայնացման գործընթացն ու պատմափուլերը (1917 թ. հոկտեմբերի 26՝ Գրոզնի, 1918 թ. մարտի 18-23՝ Նալչիկ, 1920 թ. ապրիլի 28՝ Ադրբեջան, դեկտեմբերի 2՝ Հայաստան, 1921 թ. փետրվարի 25՝ Վրաստան): Վարչատարածքային և սահմանային խնդիրները Կովկասում խորհրդայնացումից հետո:

## Թեմա 10.
## Կովկասը Խորհրդային ժամանակաշրջանում

Ազգային քաղաքականությունը Կովկասում խորհրդայնացումից հետո: Անդրֆեդերացիայի ստեղծումը: ԽՍՀՄ կազմավորումը. 1922 թ. դեկտեմբերի 30-ի հռչակագիրը և պայմանագիրը: Անդրֆեդերացիան ԽՍՀՄ-ի կազմում 1922-1936 թթ.:

Կաբարդինա-Բալկարական ինքնավար մարզի կազմավորումը 1922 թ. հունվարի16-ին: Հյուսիս Օսեթական ինքնավար հանրապետության կազմավորումը 1924 թ. հուլիսի 7-ին: Չեչենա-Ինգուշեթական ինքնավար մարզի հռչակումը 1934 թ. հունվարի 13-ին:

Կովկասյան ժողովուրդների սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային զարգացումները խորհրդային տարիներին:

Կովկասյան ժողովուրդները Հայրենական մեծ պատերազմի շրջանում՝ 1941-1945 թթ: Կովկասյան ժողովուրդները ետպատերազմյան տարիներին: ԽՍՀՄ 1977 թ. նոր Սահմանադրությունը:

## Թեմա 11.
## Ռուսաստանի քաղաքականությունը Կովկասում ետխորհրդային տարիներին

ԽՍՀՄ փլուզումը 1991 թ. դեկտեմբերին և ԱՊՀ ստեղծումը: Աշխարհաքաղաքական նոր գործընթացները Կովկասյան տարածաշրջանում: Անկախ պետությունների հռչակումը Հարավային Կովկասում: ՌԴ և Հարավային Կովկասի երկրների միմյանց անկախության ճանաչումը. ռազմա-դիվանագիտական հարաբերությունները 1991-1992 թթ. ՌԴ ռազմաքաղաքական, տնտեսական և տարածաշրջանային քաղաքականությունը Հյուսիսային և Հարավային Կովկասում: ՌԴ և տարածաշրջանային ժողովուրդների ազգամիջյան հակամարտությունները ու անվտանգության հիմնախնդիրները: Ռուս-չեչենական հարաբերությունները:

ՌԴ և ՀՀ փոխհարաբերությունների ռազմավարական գործընկերային բնույթը: ՌԴ, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների փոխհարաբերությունները, դրանց զարգացման միտումներն ու հեռանկարները:

**Ռեֆերատների թեմաներ**

1. Ռուսաստանը և Կովկասյան ժողովուրդների քաղաքական, սոցիալ-տնտեսական կացությունը 19-րդ դարի առաջին կեսին
2. Վրաստանի ռազմաղիվանագիտական հարաբերությունները ռուսական կայսրության հետ 19-րդ դարի սկզբներին
3. Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին. Արևմտյան Վրաստանի բռնակցման ընթացքը
4. 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը. Գյուլիստանի պայմանագիրը
5. 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը. Թուրքմենչայի պայմանագիրը
6. Կովկասյան 1817-64 թթ. պատերազմը, ընթացքը, արդյունքները
7. Մյուրիդիզմ
8. Վարչական բաժանումները և ռուսական վարչաձևի հաստատումը Կովկասում 19-րդ. դարում
9. Կովկասյան ժողովուրդների էթնիկ-ազգային պատկերը 19-րդ դարում
10. Ցարիզմի ռուսականացման քաղաքականությունը Կովկասում
11. Վրացական ուղղափառ եկեղեցու ավտոկեֆալիայի վերացումը և էկզարխիայի ստեղծումը
12. Հայ առաքելական եկեղեցու վերաբերյալ 1836 թ. մարտի 11-ի կանոնադրությունը:
13. Վարչատարածքային ինքնավարության ձգտումները Անդրկովկասում և տարածքային վեճերի սկզբնավորումը
14. Վարչատարածքային խնդիրները Կովկասում խորհրդայնացումից հետո:
15. Անդրֆեդերացիան ԽՍՀՄ կազմում:
16. ԽՍՀՄ փլուզումը 1991 թ. և անկախ պետությունների ձևավորումը Հարավային Կովկասում

## Աղբյուրների և գրականության ցանկ
## աղբյուրներ


1. Акты Кавказкой Археографической комиссии, т. 1-12, Тифлис, 1866-1904.
2. Кавказкий сборник, т. I-XXX, Тифлис, 1876-1910.
3. Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. I-III, Москва, 1833-1838.
4. Присоединение Восточной Армении к России, сборник документов, Т. 1-2, Ереван, 1972, 1978.
5. **Юзефович Т. П.,** Договоры России с Востоком. политические и торговые, Санкт-Петербург, 1869.


## Մենագրություններ, ուսումնասիրություններ
## (հայերեն)


1. Անդրկովկասի և նրա աշխարհաքաղաքական միջավայրի անվտանգության ու խաղաղության հեռանկարները: ՌԱՀՀԿ, վերլուծական անդրադարձ, Երևան, 1996:
2. **Ավետիսյան Հ. Ա.,** Հայկական հարցը 1918 թ., Երևան, 1997:
3. **Գալոյան Գ. Ա.,** Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդը, Երևան, 1978:
4. **Գալոյան Գ. Ա.,** Հայաստանը և մեծ տերությունները 1917-23 թթ., Երևան, 1999:
5. **Իսկանդարյան Ալ. Մ.,** Կովկասյան համասարակշռություն, Հայացք Երևանից, թիվ 5 (26), մայիս, 2000:
6. **Կնյազյան Դ. Վ.,** Ադրբեջանական Դեմոկրատական հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, 2008:
7. **Հարությունյան Ա. Հ.,** Թուրքական ինտերվենցիան Անդրկովկասում 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984:

8. **Մուրադյան Մ. Ա.,** Ռուսաստանի պատմության հիմնահարցեր (19-րդ դար), Երևան, 2011:
9. **Մելքոնյան Ա. Ա.,** Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի 1-ին քառորդում, Երևան, 2003:
10. **Սարդարյան Կ. Խ.,** Հայ-վրացական հարաբերությունները 1918-21 թթ., Երևան, 2002:
11. **Վիրաբյան Վ .Հ.,** Հայաստանը Անդրկովկասյան հանրապետությունների 1920 թ. ապրիլյան վեհաժողովում, Երևան, 2004:

## Ռուսերեն

1. **Алавердян М. Я.,** Граф Иван Федорович, Паскевич-Эриванский и его деятельность на Кавказе в очерках армянского историка, Санкт-Петербург, 1912.
2. **Анчабадзе Ю. Д.,** Национальные окраины Российской империи: становление и развитие системы управления, Отечественная история, 1999. № 4.
3. **Бутков П. Г.,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1830, ч. I-II, Санкт-Петербург, 1869.
4. Война и ислам на Северном Кавказе XIX - XX вв, (Отв. ред. В. В. Трепавлов), РАН, Ин-т рос. истории, Москва, 2000.
5. **Вартанян Р. Г.,** Российская политика на Кавказе, Ереван, 2005.
6. **Гаджиев К. С.,** Геополитика Кавказа. Москва, 2003.
7. **Гакстгаузен А.,** Закавказскийй край, ч. I-II, Санкт Петербург, 1857.
8. **Галоян Г. А.,** Россия и народы Закавказья,Москва, 1976.
9. **Дегоев В. В.,** Большая игра на Кавказе: история и современность, Москва, 2001.
10. **Дубровин Н. Ф.,** История войны и владычества русских на Кавказе, т. I-IV, Санкт-Петербург, 1871-1886.

11. **Дякин В. С.,** Национальный вопрос во внутренней политике царизма (XIX в.), Вопросы истории. 1995. № 9.
12. Земля Кавказская: Бремя конфликтов и время перемен: Коллективная монография (Науч. ред. Л. Арутюнян, Авт. Л. Арутюнян, С. Аствацатуров и др.), Ереван, 2007.
13. **Зубов П. П.,** Картина с последней войны России с Персиею 1826-1828, Санкт- Петербург, 1834:
14. **Ионнисян А. Р.,** Присоединение Закавказя к России и международные отношения в начале XIX столетия,Ереван, 1959.
15. Кавказ и Кавказкая война, Публичные лекции в 1860 годы генерального штаба полковником Романовским, Санкт-Петербург, 1860.
16. Кавказ-Россия: Миграция легальная и нелегальная (Под.ред. А. Искандаряна), Ереван, 2004.
17. Кавказ в российской политике: История и современность: Материалы международной научной конференции, Москва, МГИМО(У) МИД России, 16-17 мая 2006 г. (Под ред. В.В. Дегоева), Москва, 2007.
18. Кавказ и Россия - прошлое и настоящее, История, обычаи, религия, Санкт-Петербург , 2006.
19. **Ковалевскийй П. И.,** Завоевание Кавказа Россией,Санкт-Петербург, 1911.
20. **Кортуа Н. М.,** Из истории восточной политики России, Тбилиси, 1978.
21. **Лапинский Т.,** Горцы Кавказа и их освободительная борьба против русских: описание очевидца Теофила Лапинского (Теффик-бея), полковника и командира польского отряда в стране независимых кавказцев, В 2 т., Нальчик, 1995.

22. **Лысыцов В. П.,** Персидский поход Петра I 1722-1723, Москва, 1951.
23. Национальная политика в императорской России. Цивилизованные окраины (Финляндия, Польша, Прибалтика, Бессарабия, Украина, Закавказье, Средняя Азия). Москва, 1997.
24. **Пайчадзе Г. Г.,** Георгиевский трактат, Тбилиси, 1983.
25. **Покровский Н. И.,** Кавказские войны и имамат Шамиля, (Под ред. В.Г. Гаджиева, Н.Н. Покровского), Москва, 2000.
26. **Потто В. А.,** Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах, биографиях, Т. 1-3, Санкт- Петербург, 1886-1887.
27. **Примаков Е. М.,** Мир без России? К чему ведет политическая близорукость. Москва, 2009.
28. Присоединение Кавказа к России. XIX век, (Сост. А.Г. Макаров, С.Э. Макарова), Санкт-Петербург, 2005.
29. Россия и Закавказье: реалии независимости и новое партнерство, Москва, 2000.
30. Россия и Кавказ: История. Религия. Культура: Сб. ст., Санкт-Петербург, 2003.
31. Россия и Кавказ - сквозь два столетия, Исторические чтения, Санкт-Петербург, 2001.
32. Россия и Кавказ на рубеже столетий: (Материалы второго заседания "круглого стола" "Между Западом и Востоком. Россия и Кавказ на рубеже столетий" на общую тему: "Россия и Кавказ в XXI веке"), (Сост.: В.А. Амирханян и др.), Москва, 2006..
33. Северный Кавказ-Закавказье: Проблемы стабильности и перспективы развития. (Материалы международной конференции). Москва, 1997.

34. **Жигарев С. А.,** Русская политика в восточном вопросе, Т. 1-2, Москва, 1896.
35. Утверждение русского владычества на Кавказе, (под. ред.. генерал-майора Потто), Т. IV, Тифлис 1860.
36. **Эзов Г. А.,** Сношение Петра Великого с армянским народом, Санкт-Петербург, 1898.
37. **Фадеев Р. А.,** Кавказская война, Москва, 2003.
38. **Шопен И. И.,** Новые заметки на древние истории Кавказа и его обетателей, Санкт-Петербург, 1866:

### Ինտերնետային կայքեր՝

1. http://www.zerkalo.az/2011-02-24/partnerstvo/17286
2. http://www.casfacor.com/rus/atlantic/246.html
3. http://kavkasia.net/ Russia/article/1325298386.php
4. http://kavkasia.net/ Russia/article/1298007092.php

**Բովանդակություն**

**Թեմա 1.**
Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը
Կովկասում 19-ից 20-րդ դարերում........................................................5
**Թեմա 2.**
Վրաստանի և Արևելյան Այսրկովկասի միացումը
Ռուսաստանին 19-րդ դարի առաջին կեսին..........................................5
**Թեմա 3.**
Ռուս-պարսկական 1826-1828 թթ. և ռուս-թուրքական
1828-1829 թթ. պատերազմները և դրանց հետևանքները
Այսրկովկասի ժողովուրդների կյանքում................................................6
**Թեմա 4.**
Ռուսաստանը և Հյուսիսային Կովկասի ժողովուրդները
19-րդ դարում. Կովկասյան պատերազմը 1817-1864 թթ.,
մյուրիդիզմ.............................................................................................7
**Թեմա 5.**
Ռուսաստանի կողմից Կովկասի տարածաշրջանի զաղութացման
սոցիալ-տնտեսական, էթնիկ, կրոնական և հոգևոր-մշակութային
քաղաքականությունը 19-րդ դարում .....................................................7
**Թեմա 6.**
Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնախնդիրները և
Կովկասյան տարածաշրջանը 19-րդ դարի երկրորդ կեսին.................8
**Թեմա 7.**
Կովկասը ցարական Ռուսաստանի վարչատարածքային
բաժանումներում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին .........................9
**Թեմա 8.**
Ռուսաստանը և Կովկասը 1-ին աշխարհամարտի տարիներին .........9
**Թեմա 9.**
Ռուսաստանյան հեղափոխությունները 1917 թ. և դրանց
ազդեցությունը Կովկասում..................................................................10

**Թեմա 10.**
Կովկասը Խորհրդային ժամանակաշրջանում....................................10
**Թեմա 11.**
Ռուսաստանի քաղաքականությունը Կովկասում  ետխորհրդային տարիներին..........................................................................................11
Ռեֆերատների թեմաներ.......................................................................12
Աղբյուրների և գրականության ցանկ..................................................13

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**«Կովկասագիտություն» բաժնի մագիստրոսական**

# Ծրագիր

# Ռուսաստանը և Կովկասի տարածաշրջանը 19-20-րդ դարերում

**Կազմեց Է. Լ. Ձոհրաբյանը,**
**պատմ. գիտ. թեկն., դոցենտ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Հրատ. սրբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 1,25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1